**Էսօր Արազն Ես Գնացել**

Էսօր Արազն ես գնացել, Լողացել՝ փերի ես դարձել, x2
Խավարին շավաղ ես գցել,Անմահ հըրեշտակի նման։ x2

Ինքդ անուշ,Խոսքդ անուշ,Շունչդ անուշ,
Շրթունքներդ համբուրեցիՉգացի ամենքից անուշ։ x2

Հագել ես վարդագոյն ատլաս,Փաթաթել վզիդ ալ ու խաս, x2
Պճնուել ես, կը շողողաս,Գարնան արեգակի նման։ x2

Ինքդ անուշ,Խոսքդ անուշ,Շունչդ անուշ,

Շրթունքներդ համբուրեցիՉգացի ամենքից անուշ։ x2

Չունիմ գրիչ, լեզու ճարտար,Գրեմ գովեմ անձիդ յարմար, x2
Դիտովիդ կ’անես շանթահար,Ամառուայ կայծակի նման։ x2

Ինքդ անուշ,Խոսքդ անուշ,Շունչդ անուշ,

Շրթունքներդ համբուրեցիՉգացի ամենքից անուշ։ x2

Գուսան Շերամ